

Շահին արքունիքին մէջ, կանոնաւոր կերպով որոշուած էր օտար տէրութիւններու դեսպաններուն կարգը իրենց պատուին համաձայն, նոյնպէս ընդունելութեան արարողութիւնը: Ամէնէն առաջ կու գային մահմետական պետութիւններու ներկայացուցիչները. անոնց մէջն ալ առաջնութիւնը թուրքերոյ էր, կը յաջորդէր Մեծ Մոկուլի դեսպանը (մինչեւ որ վերջերս Մոկուլի աթոռանիստ քաղաքը Տէլիզ, պարսիկներէ գրաւուեցաւ): ասոնցմէ վերջ կու գային արաբ ու միւս մուսուլման պետութիւններու ներկայացուցիչները: Պարսիկ Շահը ոչ միայն Մեծ Մոկուլին հետ, այլ և մեծագործաբար խանին ու Իւզպէկներու պետին հետ ալ սերտ յարաբերութիւններ կը մշակէր: Մանաւանդ թէ որոշեալ ժամանակներու մէջ իրարու հետ անձամբ կը տեսնուէին և փոխադարձաբար իրարու արքունիքին մօտ մնայուն դեսպաններ ունէին: Քրիստոնեայ պետութիւններու մէջ առաջնութիւնը Սըրբազան Պապինն էր, ապա Գերման-Հռոմէական կայսրինը և Հունգարիոյ թագաւորինը, որոնցմէ վերջ որոշուած կարգով կու գային միւս պետութիւններու ներկայացուցիչները: Կը գրէ Ապետիք թէ պարսիկները այնքան մեծ կարեւորութիւն կու տային արարողական շարժումներու հանդիսաւոր երեւոյթին ու ընծաներուն՝ որ կարելի է զիրենք «Արեւելքի սպանիացիները կոչել»: Պարսիկ արքունիքը բոլորովին տարբեր երեւոյթ մ'ունէր մահմետական միւս մեծ պետութեան՝ թուրքերոյ արքունիքէն, որ նոյնպէս կը սիրէր շքեղութիւնը, բայց — համեմատած պարսիկներու, շատ պաղ էր ան: Շահին արքունիքին մէջ շատ զարգացած ձեւ մ'ունէր դեսպանական ընդունելութիւնը, շատ բաներու մէջ նման արեւմտեան Եւրոպային: Պարսիկները են և կը սիրեն քաղաքավարի, ազնիւ ու զարգացած, միեւնոյն ժամանակ առնացի խօսակցութիւնն ու երեւոյթը:

Երբ շքախումբը Աւաքափի (Շահին պալատը) կը հասնէր, ամէն ոք ձիէն պէտք էր

իջնել ու հետի շարունակել ճամբան: Պալատին առջեւ կը սպասէր Մարդպետը ճոխ հագուած և դեսպանին ձեռքէն բռնելով կ'առաջնորդէր զայն մետաքսէ գորգերով պատած անձայր սրահներու մէջէն դէպի Շահ:

Վեհապետը սովորաբար նստած կ'ըլլար յարգի քարերով զրուագուած բարձր գահի մը վրայ: Իսկ ամէնէն հանդիսաւոր առիթներուն «Սերամարդի գահ» կոչուածին վրայ կը բազմէր, որ մինչեւ այսօր ալ գոյութիւն ունի և որ թէ գեղարուեստական և թէ ազգագրական տեսակէտով անգնահատելի արժէք մը կը ներկայացնէ:

Գեսպանը կը մտնէ մեծահարուստ տաւաղներ հագած՝ արքունի մարդոց գահիձը որուն կեդրոնը ազատ թողուած է որպէս զի եւրոպացի կարենայ մօտենալ Շահին, զոր պէտք է բարեւէ մեծ խոնարհութեամբ մը, իսկ Շահը զուլիսի նշանով կը պատասխանէ բարեւին: Այն ատեն դեսպանը կը յանձնէ բերած նամակները ու համառօտ կերպով կը ներկայացնէ զաւուս պատճառը: Բնականաբար Շահը անմիջապէս պատասխան չի տար, այլ կու գայ Մարդպետը ու դեսպանին ձեռքէն բռնած՝ ետ ետ երթալով՝ կը տանի զայն վեց սատրապներու շարքին՝ ուր ան կրնայ նստիլ: Արարողական ձեւերը հիմա քիչ մը դադար կ'առնեն ու աւելի ընտանեկան մթնոլորտ մը կը տիրէ: Ամբողջ Արեւելքի մէջ, մանաւանդ թէ գրեթէ բոլոր աշխարհի միակ արքունիքն էր պարսկականը՝ ուր դեսպանը կրնար նստիլ Շահին ներկայութեան:

Ապետիքի ժամանակ ճոխութիւն սիրող ու եւրոպացիներու հանդէպ մեծ համակրանք անուցանող Շահ մը կ'իշխէր, որ սակայն միւս կողմէն յատուկ պատմական նշանակութիւն մը չէ ունեցած²: Կոյր Մահմուտ

2. History of Persia by Lieut. Col. P. M. Sykes, vol. 2. Macmillan and Co. Ltd. London 1915.

Շահէն ի վեր՝ ժիշտարու սկիզբն է որ նորէն կը զօրանայ պարսկական հարստութիւնը՝ գրաւելով թուրքերու ձեռքէն Իրանը, Արասի մէկ մասը, Միջագետքը, Հայաստանը, Դաւրէթն ու Պաղտատը. Իւզպէկներէն՝ Խորասանը, Փորթոգալցիներէն՝ Օրմուզտ անունով գաղթաւայրը, ու վերջապէս Աղուաններէն՝ Քանտաշարն ու Վրացիներն ալ հնազանդութեան կ'ենթարկէ: Այս առիթէն սկսեալ Իսպահան եղաւ Շահին մշակութեամբ աթոռանիստ քաղաքը: Ամառ ժամանակ սակայն աթոռը Գաղուին կը փոխադրուէր, իսկ երրորդ աթոռանիստ քաղաքը՝ նոր գրաւուած Դաւրէթն էր: Սաֆի Շահի (1628-1642) ու յաջորդին Աբաս Բ-ի (1642-1666) ժամանակ թրքական ու հնդկական պատերազմները անցուկար միայն խռովեցին Պարսկաստանի անդորրութիւնը, քաղաքակրթութիւնն ու վաճառականութիւնը:

Սուլթան Բ. Շահը, որ 1666-1694 կը գահակալէր, շատ համակրեցաւ Պետրոս Ապետիքի: Ան, հակառակ իր նախորդին, շատ քիչ կարեւորութիւն կու տար պետութեան ներքին գործերուն, աւելի զբաղելով ժամանակը կը բաժնէր հարէմի ուրախութիւններու ու զինքը աւելի հետաքրքրող արտաքին քաղաքականութեան միջեւ: Շահին արքունիքին մէջ շատ քրիստոնեայ պետական մարդիկ, մանաւանդ թէ քահանաներ ալ կ'ապրէին: Այսպէս օրինակի համար, Ապետիքէն 32 տարի առաջ եկած Ռափայէլ տիւրքէն Մանս վեղարաւոր հայրը, որ նոյն ժամանակ իշխող Աբրահ Բ-ի հօր շատ վստահելի մարդն ու բարեկամը զարձած էր: Սա իբր քարոզիչ եկած էր Իսպահան. իր հանգարտաբարոյ բնաւորութեան, խոհականութեան ու գիտութեան համար շուտով սիրելի դարձաւ Իսպահանի զիտնականներուն, մանաւանդ իր թուաբանական ու աստեղագիտական հմտութեան համար: Կը պատմեն իր մասին թէ քանի մը տարիէն այնքան հօշոտ կաւոր գարձաւ որ Շահն ալ երբ «հոգեկան

սփոփանք փնտռէր», ստէպ կանչել կու տար Հայր Ռափայէլը, որ կատարեալ արեւելցի մըն էր այլեւս, բայց միշտ եռանդուն քրիստոնեայ ու Պետրոս Ապետիքի ալ լաւ բարեկամ:

Իսպահանի մէջ կար նաեւ ամբողջովին քրիստոնեայ թաղ մըն ալ, Կիւսուրապատ կոչուած: Քրիստոնեայ եկեղեցական մեծերը իրենց հաւատացեալներու գործերուն համար ստէպ Արքունիք կ'երթային:

Պետրոս Ապետիքն ալ շատ սիրելի դարձուց ինքզինքը Շահի արքունիքին: Պարձանքով կը գրէ թէ Սուլթան իրեն հանդէպ շատ բարեացակամ էր ու շատ ընտանեկան վերաբերում ցոյց կու տար: Մանաւանդ, կը գրէ ինքզինքը գրեթէ արդարացնելով մը, թէ ինչպէս Վիեննա եկած պիտի ըլլար, երբ կրնար Սուլթանի արքունիքն ալ մնալ: Զինքը լաւ կը ճանչնային արդէն Մատթէոս Քահանան, ու ասոր մահէն վերջ Պիսկոպոս Վրդ. Բ. ու Էջմիածնի կաթողիկոս պատրիարքը, քանի որ ստէպ պալատ կու գային: Անշուշտ լաւ գիտէին Շահին վերաբերումը Պետրոս Ապետիքի հանդէպ: Ինչպէս կը տեսնենք անոնցմէ մնացած նամակներէն թէ չեն հակասեր Ապետիքի ըսածներուն: Փրանկիսկոս Պիսկոպոս Վրդ. Բ. ալ Վիեննա կը գտնուէր երբ Ապետիք իր տեղեկատուութիւնն ըրած էր Շահին հետ ունեցած յարաբերութիւններու մասին:

Ինչպէս ալ ըլլայ այս հարցը, Շահին հետ ունեցած իր լաւ յարաբերութեան կը վկայէ նաեւ իր առաքելութեան յաջողութիւնը: Մատթէոս քահանան, որ սկիզբը իբր ընկերացող մըն էր, քիչ վերջ կը գտնենք իբր Նաշիրվանի առաքելութեան առաջնորդ. աս ալ նոյնպէս գործին յաջողութեան նշան մըն էր: Որոշ ու մանրամասն տեղեկութիւններ չունինք այս գործին ինչպէս վերջանալու մասին. Պետրոս Ապետիք իր պարսկական առաքելութեան շուրջ զրաժներուն մէջ շատ բաներով դեռ պարտական կը մնայ մեզի: Ապետիքի հայրը, Մուրատ, Հալէպէն փախչելով Սաֆի Շահի քով, կը նորոգէ

Ապետիք ընտանիքի ու Շահի միջեւ բարեկամութիւնը, զոր Ապետիքի մեծհօրեղբայրը կապած էր։ Սուրիմանի արքունիքն ալ ապաստանարան տուած էր Հռոմէն եկած պարսկահայ երիտասարդին, մինչեւ որ նա խանձորդ ազգականի մը զրպարտութիւնները զգուցեցին զինքը։ Իրականութիւնը ան է որ նա հոն չուզեց մնալ, որուն ինք իբր պատճառ կը բերէ, թէ չէր ուզեր «անհաւատներու» արքունիքին ծառայել։ Բայց ապահովաբար ուրիշ պատճառներ ալ կային, զորս կը լռէ։ Առ հասարակ մանրամասն ու որոշ տեղեկութիւններ միայն Պիտիպոսին հետ կապ ունեցող երրորդ պարսկական ճամբորդութեան մասին միայն կրնանք տալ, վաւերական աղբիւրներու վրայ հիմնուած, ուր կենդանի պատկերներով մեր աչքերուն առջեւ կը դնէ պարսկ արքունիքը։

Արդ, ամէն յաջողութեամբ վերջացուցած
ըլլալով իրենց յանձնուած դիւանագիտու-
կան ու քաղաքական գործերը, քիչ վերջ
Մատթէոս քահանայն կը գտնենք տեղական
մեծագոյն կեդրոններէն մէկուն, Նաշիրովանի
մէջ իբր առաջնորդ: Պէտք է սակայն նախ
քիչ մը լոյս սփռենք Հռոմի Սուրբ Աթոռին
ու Պարսկաստանի քրիստոնեաներու փոխ
յարարելութիւններու մասին որովհետեւ
այսպէս միայն պիտի կարենանք հասկնալ
թէ Ապետիք որքան մեծ ծառայութիւն մա-
տուցած է քրիստոնէութեան, որուն համար
ընդունած էր արեւելքի քրիստոնեաներու
միաւթեան կարեւոր գործը: Եւրոպայի պե-
տերը ու Պապն ալ հաշիւ կ'ընէին նաեւ
մինչեւ Հնդկաստան ջրուած մեծ թիւով

քրիստոնեաներու վրայ: Հոս սովոյն շատ
անհաւասարութիւններ պէտք էր հարթել.
մանաւանդ թէ ամէնէն առաջ կապակցու-
թիւն պէտք էր հաստատել Ս. Աթոռի,
Արեւելքի ու Արեւմուտքի քրիստոնէութեան
պետերու միջեւ: Պետրոս Ապետիք առ այժմ
Շահին արքունիքը կ'ապրէր, ու ինչպէս
Cehil Sutun-ի մէջ կը գրէ, արդէն հոն-
տեղէն սկսած էր կարգաւ հունգարացիներու
ծագման մասին («de notatu digne de
origine Ungarorum») արեւելեան պրիւր-
ները: Կոյնպէս իրմէ կ'իմանանք թէ ինչ-
պէս Շահի Կ. Պոլսոյ զեսպանը լուր բերած
էր 1664-ի աշնան Սանկթարաի յաղթու-
թեան: Շահը ճիշտ ընթրիքի երթալու վրայ
էր երբ Մարդպետին հետ հասաւ փոշոտած
ու վստակարեկ զեսպանը՝ իմացնելով թէ
թուրքերը ծանր պարտութիւն մը կրած են
Հունգարիոյ մէջ: Սանկթարաի մարտին
մէջ Սհմէտ փաշա բազմաթիւ մարդ կորսն-
ցուցած էր: Շահի արքունիքի մէջ ուրախու-
թեան մեծ հաղթաններ սարքունեցան, որուն
նկարագրութիւնը ուրիշ ոչ մէկ տեղ կը գտա-
նենք. սակից կ'իմացուի թէ որքան մտա-
հոգութիւն կը պատճառէր Պարսկաստանի
հունգարիոյ նուաճումը թուրքերէն:

Երբ Ապետիք Շահի արքունիքին մէջ վերջ
 ջացուց իր գործը՝ մեկնեցաւ գէպի Պարսկաս-
 տանի քրիստոնէութեան մայրաքաղաքը՝
 Ինչպէս վերեւ յիշեցինք։

Հիմա պէտք է ծանօթանանք Յակոբ Գ
 պատրիարքի անձին ալ։

ԹԻՂԳՐ. Հ. ԱՆԴՐԵԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

(Գարոշնակերի)



ቆ ሆ ጊ ያ ካ ቴ ጊ

Քաղցկեղը արդի մեծ առեղծուածներէն
մին է, որոնք դեռ բազմաթիւ անակնկալներ
կը պարունակեն: Ուսուցչապետ Հիւկէն
Փարիզի համալսարանի Քաղցկեղի բաժնի
փոխ Տեսուչը՝ «Մի իսկ նախնական ձըշ-
նարտուչիւններ քաղցկեղի վրայ» վերնագրին
տակ հատոր մը հրատարակած է՝ շահեկան
և նոր տեսութիւններով, որուն ամփոփումը
կ'ընէ Սնորէ Թեթրի (տքթ. գիտութեանց)
«Les Nouvelles Littéraires» ի մէջ՝ Թ.
1013:

Քաղցկեղին սահմանը դեռ անորոշ է. ան
կը համապատասխանե՛ փնացնող ու բռնա-
դրաւող յատկութիւններով օժտուած՝ դի-
մացկուն հիւսուածային վերակազմութիւն-
ներու, որոնք կարող են կրկնուելու և տե-
ղափոխուելու նախնական ախտակեղրոնէն
հետու։ Չարախտութեան, այսինքն պալա-
րին գէշ տեսակ ըլլալը (malignité) ճշգիւր՝
չստ գժուարին է. ինչպէս նաեւ ախտին
քաղցկեղ ըլլալը կամ ոչ՝ որոշելը չափազանց
փափուկ հարց մըն է, մանաւանդ երբ վերքը
նուազ կարեւորութիւն ունի և յատուկ նշան-
ներէն զուրկ է։ Քաղցկեղը թագուն հի-
ւանդութիւն մըն է, որուն ցայտուն ախ-
տանիշերը ուշկեկ կը յայտնուին. անոր
ախտաբանութիւնը (noxologie) դիւրաւ չի
վերլուծուիր՝ բոլոր պարագաները ներկա-
յացնող պարզ, միակ ախտանշանի վրայէն։
Այս գժուարութիւնը հետեւեանքն է սխալ
ախտաճանաչումի և գէշ դարմանամեքերու։
Քաղցկեղի կանխաճշգումը միմիայն մասնա-
հատումի քննութեամբ (biopsie) կարելի է
ընել. կասկածելի վերքի մը հատումը և իր
հիւսուածաբանական քննութիւնը ամենա-
ճիշդ կերպով պէտք են ըլլալ. նոյնիսկ ման-
րեղիտակը ամէն անգամ չէ կարող հա-
տատել ախտին չար կամ անփնտ Ըլլալը։
Այսօր՝ հասարակաց կարծիքն է որ՝ քաղց-

կեղը շատ աւելի ընդհանրացած է քան
էրբեք: Իրականին մէջ սակայն այս յաւե-
լումը երեւութական է: Բժշկութեան մաս-
նագիտական յառաջադիմութիւնը կը յայտնէ
քաղցկեղի անծանօթ մնացած տեսակներ:
Այսպէս օրինակի համար, թոքերու քաղց-
կեղը միայն դարէ միլիւր ծանօթ է. մշտա-
տեւ ցնցդատապը (bronchite chronique)
իրականին մէջ քաղցկեղ մըն է. փին գալը
(colique de miserere), աղիքներու խցումը
(obstruction intestinale), վերնաղիի քաղց-
կեղներ են: Ուղեղային պալարները ատեն
մը խելապատակի գայրուց (méningite) կը
նկատուէին: Քաղցկեղային գեղձուոյցները
պիտակուած էին իբր ուռախտ (tubercu-
lose) կամ փոսնկախտ: Իսկ որովայնակե-
ղերը (ulcères), վերնամաշկի այտուցի (épi-
thélioma) կը համապատասխանէին: Պոր-
տալի գայրուցները (péritonites) անծանօթ
պալարներու ընդհանրացումը կը ներկա-
յացնէին: Միւս կողմէն՝ կեանքի միջին
տեւորութեան յաւելումը կը նպաստէ աճում
մը նորահիւսկէններու (néoplasies) թուոյն:
Միայն ամենախիստ և երկար ժամանակի
միջոցին քննութեամբ հաստատուած վիճա-
կազրութիւններ պիտի վճռեն թէ՛ արդեօք
քաղցկեղի շատնալը իրական է թէ՛ առե-
րեւոյթ:

Որոշ տարիք մը կու տան քաղցկեղի, ինչ որ գոյութիւն չունի, ծնունդէն մինչեւ ծերութիւն քաղցկեղը կը տեսնուի. բայց, աւելի յաճախ հասուն տարիքի մէջ: Այնչէն աւելի վտանգաւոր և բազմապիսի գէշ պաշարները կը յայտնուին 30էն 60 տարեկան հասակին մէջ: Քաղցկեղը թէ՛ այրերը և թէ՛ կիները կը մեռցնէ կորովի հասակի մէջ, և ոչ թէ ծերերը, որոնք յաճախ կ'ունենան մորթի այտուց, ինչ որ դելուաւ դարմանելի է: Կանաչի ծինդագործարաններու քաղցկեղները քառասնամեայի հիւանդութիւններ են: Քաղցկեղը երիտասարդներու ամորձիքներուն կը յարձակի. մինչդեռ ոսկրի պաշարը (ոսկրախտ) պատանիներու և մանուկներու մէջ կը տիրէ: Ստեղծայ մանուկը